ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 05 2022թ.
№ ԿԱԼՀ/2-560

«Մեթր-Սթիլ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01231138)
Գ. Խաչատրյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Լենինգրադյան 48/5-19
էլ. հասցե՝ metre-style@yandex.ru
հեռ. 010 39 89 85; 094-93-23-41

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարեր թվով չորս անվանատողով նախատեսված ապրանքներ, որոնցից մեկ անվանատողով նախատեսված, ընդհանուր 200 հատ փայտե արկղերից (Ֆիզիկական պատրաստության կրովի արկղ) 75 հատ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. մայիսի 5-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 177 911 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 499 400 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 749 100 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am